ՁԵՎ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 162
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
06-002-0202-0080 կադաստրային ծածկագրով 0.01426 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարք	06-002-0202-0080 կադաստրային ծածկագրով 0.01426 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր
06-002-0274-0028 կադաստրային ծածկագրով 0.0102 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող	06-002-0274-0028 կադաստրային ծածկագրով 0.0102 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից տրամադրված «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության կարծիքը՝ հողամասի տարածքում առկա են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲ ընկերությանը պատկանող M6 և M16 ավտոմայրուղիների եզրով անցնող մայրուղային մալուխներ:

4. ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Ալավերդի համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ. Դավթյան

Երևան, « 27 » «մայիսի» 2021թ.